

9. Fifth Sunday of Transfiguration (Eve of the Fast of the Assumption)

Isaiah 7:1-9; 1 Corinthians 13:11-14:5; Mark 2:1-12

9. ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻՆ (Բարեկենդան Վերափոխման)

Եսայի 7:1-9; 1 Կորնթացիներուն 13:11-14:5; Մարկոս 2:1-12

Եսայի 7:1-9

Հրէաստանի Աքազ թագաւորին օրով, որ Յովաթամի որդին էր եւ Ոզիայի թոռը, Ասորիքի Ռասին թագաւորը եւ Իսրայէլի Փակէէ թագաւորը, որ Ռոմելի որդին էր, Երուսաղէմի դէմ պատերազմելու պատրաստուեցաւ. բայց չկրցաւ յարձակման անցնիլ: Երբ Աքազ եւ ամբողջ Հրէաստան լուր առին թէ Ասորիքը Եփրեմի հետ դաշնակցած է, թագաւոր եւ ժողովուրդ իրենց սարսափէն սկսան դողալ, այնպէս ինչպէս անտառին ծառերը կը դողան հովին դիմաց:

Այն ատեն Տէրը Եսայիին ըսաւ. «Ե՛լ, հետդ առ քու տղադ որ ՇէարԵաշուր* կը կոչուի, եւ գնա Աքազի քով: Իրեն պիտի հանդիպիս թափիչին արտը տանող ճամբուն վրայ, ջրանցքի վերին աւազանին քով: Այսպէս ըսէ իրեն.- Զգո՛յ՛ն եւ հանդարտ եղի՛ր, տակնուվրայ մի՛ ըլլար ու մի՛ վախնար Ասորիքի եւ Իսրայէլի թագաւորներէն որոնք ծխացող երկու խանձող փայտերու պէս երբ գան իրենց գայրոյթը քու վրադ թափելու՝ եւ քեզ հարուածէն պիտի փրկեմ:

Ասորիքի եւ Իսրայէլի թագաւորները քեզի համար չար ծրագիր մը յղացան եւ ըսին. Ելլենք Հրէաստան երթանք, մեր կողմը սիրաշահինք հրէաստանցիները կամ բռնադատենք զանոնք եւ անոնց վրայ թագաւոր կարգենք Տաբելի որդին»:

Բայց այսպէս կըրսէ Երկնաւոր Զօրքերու Տէրը.- «Այս ծրագիրը պիտի չիրականանայ բնաւ: Որովհետեւ ինչպէս Ասորիքի մայրաքաղաքը Դամասկոսն է եւ Դամասկոսը կառավարողը Ռասինի տունը, այնպէս ալ Իսրայէլի մայրաքաղաքը Սամարիան է եւ Սամարիան կառավարողը՝ Ռոմելի որդին տունը. բայց ահա վաթսունհինգ տարիէն Իսրայէլ պիտի կորսնցնէ իր թագաւորութիւնը: Դուք ալ, նմանապէս, եթէ Տիրոջ չվստահիք՝ դուք ալ պիտի չկարենաք գոյատեւել»:

1 Կորնթացիներուն 13:11-14:5

Երբ երեխայ էի՝ երեխայի պէս կը խօսէի, երեխայի պէս կը խորհէի եւ երեխայի պէս կը տրամաբանէի. իսկ երբ տղամարդ դարձայ, բոլոր երեխայական բաները մէկ կողմ դրի: Նոյնպէս ալ, մենք այժմ գԱստուած կը տեսնենք աղօտ կերպով, կարծես հայելիի մը մէջէն. բայց երբ ամէն բանի կատարումը գայ՝ զայն պիտի տեսնենք դէմ առ դէմ: Այժմ միայն մասնակիօրէն կը ճանչնամ գԱստուած, բայց այն ատեն պիտի ճանչնամ ամբողջապէս, ճիշդ ինչպէս ի՛նք զիս կը ճանչնայ:

Ներկայիս, ուրեմն, միակ կարելոր բաներն են՝ հաւատքը, յոյսը եւ սէրը. իսկ այս երեքէն մեծագոյնը՝ սէրն է:

Ուրեմն՝ սիրոյ հետամուտ եղէք: Միաժամանակ հոգեւոր պարգեւներուն փափաքող եղէք, մանաւանդ մարգարէութեան: Որովհետեւ, օրինակ, անծանօթ լեզուներով խօսողը մարդոց չէ որ կը խօսի, այլ՝ Աստուծոյ. որովհետեւ ո՛չ ոք զինք կը հասկնայ, թէպէտեւ անիկա Հոգիին զօրութեամբ խորհուրդներ կը պատմէ: Մինչդէռ մարգարէութիւն ընողը մարդոց կը խօսի՝ անոնց հաւատքը ամրապնդելու, զանոնք մխիթարելու եւ քաջալերելու համար: Լեզուներ խօսողը միայն ի՛նք կ'օգտուի, մինչդէռ Աստուծոյ պատգամները հոչակողը՝ ամբողջ եկեղեցիին շինութիւն կը բերէ: Ես պիտի ուզէի որ բոլորդ ալ լեզուներ խօսիք, բայց կը նախըտրեմ որ մարգարէութիւն ընէք. որովհետեւ մարգարէութիւն ընողը աւելի՛ օգտակար կ'ըլլայ, քան լեզուներով խօսողը, բացի այն պարագայէն՝ երբ թարգմանող մը գտնուի, եւ ամբողջ եկեղեցին օգտուի:

Մարկոս 2:1-12

Քանի մը օրեր ետք, Յիսուս վերադարձաւ Կափառնատում: Անմիջապէս որ լուր տարածուեցաւ թէ տան մէջ կը գտնուի, շատեր հաւաքուեցան հոն, այնքան՝ որ դռան առջեւ իսկ տեղ չէր մնացած: Եւ Յիսուս Աստուծոյ խօսքը կը քարոզէր անոնց:

Այդ միջոցին Յիսուսի բերին անդամալոյծ մը, որ չորս հոգիներ շալկած էին: Երբ բազմութեան պատճառով չկրցան զայն Յիսուսի մօտ բերել, քակեցին տունին տանիքը եւ առաստաղը բանալով՝ անդամալոյծը մահիճով վար իջեցուցին: Յիսուս անոնց հաւատքը տեսնելով, ըսաւ անդամալոյծին.

– Որդեա՛կ, մեղքերդ ներուա՛ծ ըլլան քեզի:

Օրէնքի ուսուցիչներէն ոմանք, որոնք հոն նստած էին, սկսան մտովի քննադատել զայն.

«Ինչպէ՞ս կը համարձակի ասանկ բան ըսել. ըրածը հայիոյութիւն է: Աստուծմէ զատ ո՞վ կրնայ մեղքերը ներել»:

Յիսուս վայրկեանին գիտցաւ անոնց մտածումը եւ ըսաւ.

– Ինչո՞ւ այդպէս կը մտածէք: Ո՞ր մէկը դիւրին է. անդամալոյծին՝ «Մեղքերդ ներուած են քեզի» ըսե՞լը, թէ՛ «Ել՛, մահիճդ առ եւ տո՛ւնդ գնա» ըսելը: Բայց պէտք է գիտնաք, թէ Մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու:

Ու դառնալով անդամալոյծին, ըսաւ.

– Քեզի կ'ըսեմ, ե՛լ, ա՛ռ մահիճդ եւ տունդ գնա:

Անդամալոյծը անմիջապէս բոլորին դիմաց ոտքի ելաւ, վերցուց իր մահիճը եւ դուրս ելաւ:

Բոլորն ալ զարմացան. անոնք կը փառաւորէին զԱստուած ու կ'ըսէին.

– Այսպիսի բան բնաւ տեսած չէինք: